Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 15-06-2024 թ. որոշմամբ**
**««ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»**

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ 26/1 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 222.160.00232 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2003-11-25 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 02507456 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)93690029 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | www.himnadram.org |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | k.mkrtchyan@himnadram.org |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| Հայկակ Արշամյան | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 31 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | | |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Կենսունակ սահմաններ դրամահավաք 2023 | 6,723,343,196 |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |
| | Կենսունակ սահմաններ դրամահավաք 2023 | 154,650,766 |
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | | |

Digitally signed by
MKRTCHYAN
KRISTINE
7603760356
Date: 2024.06.26
17:14:34 AMST

| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
|---|---|---|
| | | |

**10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները**

| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
|---|---|---|
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | Հատուկ ավտոմեքենաներ՝ նախատեսված հաշմանդամների համար | 47,568,411 |
| | Ամենազնացների պահեստամասեր | 20,543,340 |
| | Բժշկական պարագաներ, բժշկական սարքավորումներ | 4,338,014 |
| | Հեծանիվներ | 33,060,663 |
| | Գյուղատնտեսական ապրանքներ | 526,641 |
| | Էլեկտրական լուսաղիոդային սարքավորումներ | 41,592,174 |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | | |

**11. Իրականացված ծրագրերը՝**

| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը |
|---|---|
| "ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ թաղամասում բնակելի համալիրի կառուցում (2-րդ փուլ), բնակարանների կահավորում" | 1,361,045,130 |
| "ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղում թվով 12 առանձնատների կառուցում " | 214,861,399 |
| "ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղում մանկապարտեզի կառուցում" | 138,151,523 |
| "ՀՀ Սյունիքի մարզի Գորիս խոշորացված համայնքի Ներքին Խնձորեսկ բնակավայրում թվով 6 տների կառուցման շինարարական աշխատանքներ" | 177,615,225 |
| "ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Հայկաձոր բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման շինարարական աշխատանքներ" | 53,241,174 |
| Իջևան քաղ.Սոս մանկական գյուղեր հիմնադրամում արևային ջրատաքացուցիչի վերանորոգում | 840,000 |
| Իջևան խոշորացված համայնքի Բերքաբեր բնակավայրում թվով 38 առանձնատների տանիքներին արևային ջրատաքացուցիչների տեղադրում | 15,984,667 |
| Իջևան խոշորացված համայնքի Բերքաբեր բնակավայրի մանկապարտեզի տանիքին արևային ֆոտովոլտային Օնգրիդ կայանի տեղադրում | 1,084,385 |

| | |
|---|---|
| Դիլիջան համայնքի Խաչարձան բնակավայրում թվով 46 կարիքավոր ընտանիքների համար արևային ոչ ձնշմ.թերմոսիֆոնային ջրատաքացուցիչների տեղադրման նախագծային աշխատանքներ | 1,600,000 |
| Արևային Լոռի ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում կայուն զարգացման ուսուցման իրականացում (Կազա) | 14,548,073 |
| Խարբերդի մանկատան լուսավորման բարելավում | 819,000 |
| Նոյեմբերյանի Ն.Նասիբյանի անվան ԲԿ-ին տրամադրված էլեկտրամատակարարման միավորներ | 32,952,796 |
| Տավուշի Պատրիկ Տէվէջեանի անվան տարածաշրջանային քոլեջ հիմնադրամին տրամադրված էլեկտրամատակարարման միավորներ | 2,957,302 |
| "Իջևանի խոշորացված համայնքի Բերքաբեր բնակավայրի արտաքին լուսավորության բարելավում" | 8,154,800 |
| "Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղ.Ն.Նասիբյանի անվ. Նոյեմբերյան ԲԿ ՓԲԸ-ի ինֆեկցիոն մասնաշենքի վերակառուցման շին.աշխատ." | 68,039,060 |
| "ՀՀ ԱՄՀՆ պատկանող Նորքի տուն-ինտերնատ ՊՈԱԿ-ի առաջին մ/շ-ի 1,2 հարկերի և 3-րդ մ/շ-ի նկուղում գտնվող լվացքատան վերանորոգման աշխատանքներ " | 24,182,612 |
| "Տավուշի մարզի Բերդ քաղաքի <<Բերդի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի նախկին վիրաբուժական մ/շ-ի հիմնանորոգման և վիրահատարանին կից ապաստարանի կառուցման շին.աշխատանքներ" | 61,825,397 |
| "Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լճափ բնակավայրում բուժ.ամբուլատորիայի կառուցման շինարարական աշխատանքներ" | 40,153,823 |
| " Տավուշի մարզ Բերդ համ.Պառավաքար բնակ.բուժ.ամբուլ.կառուցման նախագծա-նախահաշվային աշխատանքներ" | 1,465,000 |
| Տավուշի մարզի Խաչարձան գյուղի դպրոցի հիմնանորոգում և կահավորում | 395,220 |
| "Սմարթ Արմենիա բարեգործական հիմնադրամի հետ համատեղ ռոբոտաշինության դասընթացների կազմակերպում պատերազմից տուժած երեխաների համար" | 19,782,004 |
| "Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Չարենցի 50/1 հասցեում 50 տեղով մանկապարտեզի կառուցում" | 65,122,092 |

| | |
|---|---|
| "Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի Նոր Գեղի գյուղի թիվ 1 մանկապ.ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տարածքի բարեկարգում, ցանկապատում" | 29,513,983 |
| Սյունիքի մարզի Տեղ գյուղի դպրոցին համակ.տեխնիկայի տրամադրում | 3,936,000 |
| " Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի Խաչարձան բնակավայրի գործող մանկապարտեզի  բակային խաղահրապարակի բարեկագման և խաղասարքերի տեղադրման աշխատանքներ" | 3,179,052 |
| "Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Վալերի Սարգսյանի անվ.երաժշտական դպրոցինոր շենքի կառուցման աշխատանքներ" | 167,605,040 |
| "Ռեանիմանիա 15 անիմաց.ֆիլմերի արվեստի միջազգային  փառատոնի ֆինանսավորում" | 5,000,000 |
| "Հայոց ցեղասպանության հուշահամալիրի թանգարանային մ/շ-ի ներքին բակի վերակառուցման և ջրահեռացման շին.աշխատանքներ" | 8,113,052 |
| "Հայաստանի ազգային կինոկենտրոն ՊՈԱԿ-ի հետ համատեղ ծրագիր   Բարև ես եմ ֆիլմի թվայնացման աշխատանքների ֆինանսավորում" | 21,469,183 |
| " Գեղարվեստական տպագրության չորրորդ միջազգային Բիենալե փառատոնի աջակցություն" | 2,000,000 |
| "Ա.Խաչատրյանի անվ.համերգասրահի հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված սան հանգույցների կառուցում" | 9,900,584 |
| Համաշխարհային տեղեկատվական տեխնոլոգիաների 2023թ.մրցանակաբաշխություն | 20,043,509 |
| Կրթաթոշակ տավուշցի և արցախցի ուսանողներին | 4,100,000 |
| ԵՊՀ լսրանների կահավորում, համակարգչային տեխնիկայի տրամադրում | 25,083,000 |
| Սինոփսիս Արմենիա կրթական պարգևների 2023թ.մրցանակաբաշխություն | 9,612,724 |
| Միկրոէլեկտրոնիկայի միջազգային օլիմպիադա | 13,980,930 |
| Հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային կենտրոնի գործունեության ֆինանսավորում | 42,783,893 |
| Համահայկական համաշխարհային  խաղերի միջոցառումների ֆինանսավորում | 95,742,340 |
| Ընտանեկան բռնության ենթարկված կանանց աջակցման կենտրոնի ֆինանսավորում | 43,639,897 |

| | |
|---|---|
| Կորոնավիրուսի դեմ համաշխարհ.պայքարին ուղղված միջոցառումներ | 57,468,820 |
| "Սոս մանկական գյուղեր ՀԲՀ շահառու ընտանիքին 1 տարվա կարիքների (պարենային և ոչ պարենային) ֆինանսական աջակցություն, շահառու հանդիսացող թվով 133 երեխաների ամառային հանգստի կազմակերպում" | 9,213,483 |
| Հաշմանդամ զինծառայողների պրոթեզավորման համար վակումային և այլ սարքերի ձեռք բերում | 5,932,390 |
| Մանկական հագուստի և այլ պարագաների տրամադրում Շիրակ կենտրոն ՀԿ-ին | 7,477,834 |
| Մանկական հագուստի և այլ պարագաների Տիրամայր Նարեկ Աշոցքի հիվանդանոց Սուրբ Կամիլիո ԲՀ-ին | 7,272,472 |
| Հիմնատավուշ հիմնադրամին տրված պարարտանյութ | 962,641 |
| Հեծանվային սպորտի օլիմպիական մարզադպրոցին տրամադրված հեծանիվներ և այլ պարագաներ | 33,790,556 |
| Բնակարանաշություն ԼՂՀ-ում | 643,477,600 |
| Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական ուսումնարանի ֆինանսավորում | 33,090,072 |
| ԼՂՀ Ասկերան քաղաքի խաղահրապարակի կահավորում | 963,190 |
| "Հումանիտար օգնություն արցախահայությանը պարենային և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գույքի, էլեկտրական տաքացուցիչների և դեղորայքի տրամադրում" | 617,213,143 |
| "Արցախպրեսս լրատվական ակումբի բնականոն գործունեության իրականացման համար տրված.ֆին.աջակցություն" | 20,955,770 |
| GEN-MED շարժական ռենտգեն մեքենայի և բրոնխոսկոպի տրամադրում Գավառի կայազորի հոսպիտալին | 55,118,080 |
| "Հասարակական կազմակերպությունների միջոցով հումանիտար բեռների (հագուստ, տնտեսական ապրանքներ) բաշխում տեղահանված արցախցիներին " | 66,999,760 |
| "Բուժ հաստատություններին տրամադրված սարքավորումներ և այլ անհրաժեշտ պարագաներ" | 112,373,565 |
| Հաշմանդամ ազատամարտիկների համար նախատեսված հատուկ փոխադրամիջոցների տրամադրում | 49,952,080 |
| Լիբանանում հայկական կրթական հաստատություններին տրամադրված ֆինանսական օժանդակություն | 84,973,957 |

| | |
|---|---|
| Լիբանանում Ազդակ օրաթերթին տրամադրված ֆինանսական օժանդակություն | 4,250,556 |
| Սիրիայում հայկական կրթական հաստատություններին տրամադրված ֆինանսական օժանդակություն | 54,691,256 |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 4,928,554,952 |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 4,676,701,094 |

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 6 էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն ______________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______________________
ստորագրությունը, անունը, ազգանունը

# Անկախ աուդիտորի եզրակացություն

**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

**Grant Thornton CJSC**
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

*Վերապահումով կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի (Հիմնադրամ) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցի ազդեցության, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

*Վերապահումով կարծիքի հիմք*

Ընթացիկ տարում Հիմնադրամի կողմից ցուցաբերվել է հումանիտար օժանդակություն Արցախի Հանրապետության բնակիչներին, որը կազմել է 350,305 հազար դրամ: Հաշվի առնելով այն, որ նշված օժանդակությունը տրամադրվել է Արցախի ամբողջական շրջափակման ժամանակահատվածում, Հիմնադրամին չի հաջողվել ձեռք բերել նշված օժանդակության նպատակային ծախսումը հիմնավորող փաստաթղթերը: Այս ծախսերի քանակի ու բնույթի պատճառով մենք ինքներս չենք կարողացել համոզվել դրանց արդյունավետության վերաբերյալ, և, հետևաբար, մենք ի վիճակի չենք գնահատել, արդյոք առկա է այդ ծախսերը ճշգրտելու անհրաժեշտություն:

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի և իր դուստր ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

### *Այլ հանգամանք*

Խմբի 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2023թ. մայիսի 22-ին թվագրված եզրակացությունում այդ ֆինանսական հաշվետվությունների առնչությամբ արտահայտվել է չձևափոխված կարծիք:

Ի լրումն՝ ղեկավարությունը վերաներկայացրել է ֆինանսական հաշվետվությունները, ինչպես բացատրվում է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 25-ում: Մենք աուդիտի ենք ենթարկել նաև այդ վերաներկայացումները:

### *Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի և իր դուստր ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը և իր դուստր ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Խմբի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

| | |
|---|---|
| Արմեն Հովհաննիսյան | Էմիլ Վասիլյան, FCCA |
| Տնօրեն | Առաջադրանքի պատասխանատու |

31 մայիսի 2024թ.

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ

| | Ծանոթ. | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկա-յացված) | 2022թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկա-յացված) |
|---|---|---|---|---|
| Ակտիվներ | | | | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 929,779 | 450,337 | 311,054 |
| Ոչ նյութական ակտիվներ | | 1,551 | 1,944 | 1,803 |
| Հետաձգված հարկային ակտիվ | 9 | - | 14,170 | 6,550 |
| Ժամկետային ավանդներ | 7 | 465,156 | 218,487 | 639,664 |
| Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ | 6 | - | 5,372 | 3,122 |
| | | 1,396,486 | 690,310 | 962,193 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | | |
| Պաշարներ | 5 | 447,517 | 1,390,756 | 1,508,657 |
| Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ | 6 | 251,973 | 1,333,839 | 2,743,702 |
| Ընթացիկ շահութահարկի գծով ակտիվներ | | 3,798 | 3,797 | 14,044 |
| ՀՀ կառավարությանը տրված նվիրաբերություն | 12 | - | 52,768,252 | 52,768,252 |
| Ժամկետային ավանդներ | 7 | 789,534 | 906,250 | 594,730 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 8 | 1,804,721 | 1,538,926 | 15,975,374 |
| | | 3,297,543 | 57,941,820 | 73,604,759 |
| Ընդամենը ակտիվներ | | 4,694,029 | 58,632,130 | 74,566,952 |
| | | | | |
| Պարտավորություններ և զուտ ակտիվներ | | | | |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | | |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 9 | 62,264 | - | - |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 10 | 283,768 | 149,155 | 179,229 |
| | | 346,032 | 149,155 | 179,229 |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | | |
| Կրեդիտորական պարտքեր | 11 | 708,268 | 2,877,421 | 3,941,247 |
| Հետաձգված եկամուտ | 12 | 3,180,643 | 55,798,608 | 69,774,553 |
| | | 3,888,911 | 58,676,029 | 73,715,800 |
| Զուտ ակտիվներ | | 459,086 | (193,054) | 671,923 |
| Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ | | 4,694,029 | 58,632,130 | 74,566,952 |

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. մայիսի 31-ին

Հայկակ Արշամյան
Գործադիր տնօրեն

Քրիստինե Մկրտչյան
Հաշվապահական հաշվառման և ֆինանսների բաժնի պետ, գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա-յացված) |
|---|---|---|---|
| Շնորհներից եկամուտ | 13 | 5,738,386 | 19,597,110 |
| Այլ եկամուտ | | 120,743 | 88,425 |
| Ծրագրային ծախսեր | 14 | (5,232,821) | (17,932,744) |
| Վարչական ծախսեր | 15 | (472,071) | (470,019) |
| Այլ ծախսեր | | (185,484) | (278,457) |
| Գործառնական գործունեությունից արդյունք | | (31,247) | 1,004,315 |
| Ֆինանսական եկամուտ | | 56,304 | 60,099 |
| Այլ ֆինանսական արդյունքներ | 16 | 152,884 | (1,937,011) |
| Արդյունք մինչև հարկերը | | 177,941 | (872,597) |
| Շահութահարկի գծով փոխհատուցում | 17 | 22,680 | 7,620 |
| Տարվա արդյունք | | 200,621 | (864,977) |
| *Այլ համապարփակ արդյունք* | | | |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո | | 451,519 | - |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | | 652,140 | (864,977) |

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:



Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 26.06.2024 16:04